



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Համբարձում Մաթևոսյան

«02» 04 2026թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 042 - 26

Նախաձեռնող՝

«Ա-Ս ՓԱՌԻԵՐ» ՍՊԸ
ք. Երևան, Վ. Վաղարշյան 20

Գործունեությունը՝

Արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցում
Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ծովինար բնակավայր

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 042 - 26

«02» ապրիլ 2026թ.

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայքի Ծովինար բնակավայրի Աղլի քառ 1 հողամաս հասցեում «Ծովինար 2» արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Ա-Ս ՓԱՈՒԵՐ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն/նախագիծ
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ծովինար բնակավայր

Ներածական մաս. «Ա-Ս ՓԱՈՒԵՐ» ՍՊԸ-ն նախատեսում է Գեղարքունիքի մարզի Մարտունի համայքի Ծովինար բնակավայրի Աղլի քառ 1 հողամաս հասցեում կառուցել «Ծովինար 2» արևային ֆոտովոլտային էլեկտրակայանը:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի «գ» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նախատեսվում է կառուցել 8.000 ՄՎտ հզորությամբ արևային կայան հետևյալ աշխարհագրական կոորդինատներով՝ հս. լայն. 40°28'47.11"N և արլ. երկայն. 45°28'44.62"E, ծովի մակերևույթից 2008մ բարձրության վրա:

Նախատեսվող գործունեության նախագծային աշխատանքների և հաշվետվության կազմման համար հիմք են հանդիսացել՝

Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝

N 29062020-05-0046 /ճաձկագիրը՝ 05-052-0313-0005/, Մարտունի համայնքի ղեկավարի կողմից տրված նախագծման թույլտվությունը՝ N ՆԹ-11283-25, տրված՝ 11.12.2025թ.:

Հողամասի նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ էներգետիկայի, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. «Ա-Ս ՓԱՈՒԵՐ» ՍՊԸ-ն էլեկտրաէներգիայի արտադրության համար նախատեսում է կառուցել 8 ՄՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրակայան: Ծրագիրը նախատեսում է արևակայանի տեղադրում շուրջ 12.45 հա տարածքում՝ ժամանակակից ֆոտովոլտային վահանակներով և



համապատասխան ենթակառուցվածքներով (տրանսֆորմատորային ենթակայան, մալուխագծեր, պահակակետ և այլն): Տարածքը հիմնականում զուրկ է բուսածածկից, բացակայում են Կարմիր գրքում գրանցված տեսակներ, իսկ ստորերկրյա ջրերը գտնվում են 5 մ-ից ավելի խորության վրա: Շինարարության ընթացքում իրականացվելու են հողային աշխատանքներ, իսկ շահագործման ընթացքում՝ էլեկտրաէներգիայի արտադրություն և փոխանցում:

Տարածքում առկա են ջրատար առուներ, կից հանդամիջյան գրունտային ճանապարհ, մոտ 300 մետր հեռավորության վրա՝ Մ-14 ավտոճանապարհը: 133 մետր հեռավորությամբ առկա է ևս մեկ արևային ֆոտովոլտային կայան:

Համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տեխսայմանի՝ նախատեսվում է 10000կՎԱ հզորությամբ, 110/0,8/0,8 կՎ լարման ենթակայանի կառուցում, ենթակայանը միացվելու է «Ոսկեհատ» 110կՎ լարման օդային գծին էլեկտրահաղորդման գծի միջոցով 309մ օդային գծով:

Օդային հաղորդուղիներում նաև նախատեսված են լուսավորության և հսկման համակարգեր, որոնք ապահովում են անվտանգ և անխափան աշխատանք: Նախագծով նախատեսվում է կիրառել ժամանակակից տեխնոլոգիաներ, որոնք թույլ են տալիս նվազեցնել շրջակա միջավայրի վրա ազդեցությունը մինչև նվազագույն մակարդակ: Արևային էլեկտրակայանի տեղադրումը նախատեսված է կառուցել ցինկով գալվանապատված մետաղական կոնստրուկցիաներով՝ բետոնե հիմքերով ամրացված հողի վրա: Փոխակերպիչները և ֆոտովոլտային վահանակները տեղադրվում են հորիզոնի նկատմամբ 30° թեքությամբ: Ֆոտովոլտային վահանակների կոնստրուկցիաները նախատեսված են մինչև 35 մ/վ քամու արագության համար:

Արևակայանի կառուցման համար օգտագործվելու է բետոնանյութ, որը բերվելու է պատրաստի վիճակում՝ մասնագիտական կազմակերպություններից՝ պայմանագրային հիմունքներով: Բետոնն օգտագործվելու է արևակայանում մետաղական կոնստրուկցիայի հիմքերի բետոնացման աշխատանքների, ցանկապատի, լուսավորության վահանակների տեղադրման, պահակակետի, ենթակայանի կառուցման ժամանակ:

Նախատեսված է նաև տարածքի տեսահսկում արտաքին տեղադրման տեսախցիկներով, որոնք տեղադրվում են լուսավորության հենասյունների վրա:

Ֆոտովոլտային կայանի գեներատորային մասը նախատեսվում է կառուցել 15262 հատ բազմաբյուրեղային ֆոտովոլտային վահանակներով՝ յուրաքանչյուրը 625Վտ առավելագույն հզորությամբ, որոնք 26 հատ 300կՎտ և 1 հատ 200կՎտ ելքային հզորությամբ փոխակերպիչների փոփոխական հոսանքի ելուստներից մալուխներով միանում են ենթակայանի 0.8կՎ լարման գլխավոր ընդունիչ վահաններին: 300կՎտ հզորությամբ փոխակերպիչները ունեն 28-ական հաստատուն հոսանքի մուտք, 200կՎտ հզորությամբ փոխակերպիչները ունեն 18-ական հաստատուն հոսանքի մուտք, որոնց միացվում են 26 հատ հաջորդաբար միացված ֆոտովոլտային պանելներով:

Փոխակերպիչները Huawei արտադրության են, մոդելները՝ SUN2000-300KTL-H2 300կՎտ և SUN2000-200KTL-H2 200կՎտ ելքային հզորությամբ, ցանցային տեսակի, 6



վրա նվազագույնի հասցնելու նպատակով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

Արտակարգ իրավիճակների և անվտանգությունն ապահովելու նպատակով տարածքն ապահովված է լինելու հակահրդեհային վահանակներով, ծխի և ջերմաստիճանի տվիչներով, կրակմարիչներով, օդափոխության և հակահրդեհային համակարգերով, տեսախցիկներով՝ գիշերային տեսանելիության և ազդանշանային սարքավորումներով: Արտակարգ իրավիճակների և անվտանգության ռիսկերը նվազեցնելու նպատակով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ՝ շինարարության և շահագործման փուլերի համար:

Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կրելու են տեղային և ժամանակավոր բնույթ և վերաբերում են՝

- օդային ավազանի աղտոտման,
- հողային շերտի խախտման,
- ջրային ռեսուրսների հնարավոր աղտոտման,
- աղմուկի և թափոնների առաջացման,
- վտանգավոր նյութերի (յուղեր և այլն) հնարավոր արտահոսքի ռիսկերին:

Շահագործման փուլում ազդեցությունները նվազագույն են և վերահսկելի:

Պատճառաբանական մաս. «Ա-Ս ՓԱՌԻԵՐ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցումը էներգետիկ համակարգի կայունությանը նպաստող ծրագիր է, ինչպես նաև այլընտրանքային էներգետիկայի ոլորտում ներդրում, որը դրական ազդեցություն կունենա երկրում տնտեսական, բնապահպանական, էներգետիկ և ռազմավարական ուղղությունների զարգացման վրա: Կառուցապատման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների հեռացում, օգտագործված ճանապարհների հարթեցում:

Տարածքը կհամալրվի հակահրդեհային և ազդանշանային համակարգերով, տեսահսկմամբ, ինչպես նաև կապահովվի աշխատողների սանիտարահիգիենիկ պայմանների պահպանումը՝ ՀՀ նորմերին համապատասխան:

Նախատեսված են համալիր միջոցառումներ՝

- փոշու նվազեցման (ջրցան, ծածկված տեղափոխում),
- թափոնների պատշաճ կառավարման,
- հողի և ջրի աղտոտման կանխարգելման,
- կենսաբազմազանության պահպանման,
- արտակարգ իրավիճակների կանխարգելման և արագ արձագանքման համար:

Եզրափակիչ մաս. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ «Ա-Ս ՓԱՌԻԵՐ» ՍՊԸ-ի կողմից նախատեսված արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման վերաբերյալ հանրային լսումներն իրականացվել են Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովինար բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում: Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առաջվում են



շինարարական աշխատանքների և շահագործման ընթացքում հնարավոր վտանգավոր թափոնների առաջացմամբ, կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ: Ծրագիրը կնպաստի վերականգնվող էներգետիկայի զարգացմանը, էներգետիկ համակարգի կայունությանը, ինչպես նաև կունենա դրական տնտեսական և բնապահպանական ազդեցություն:

Պարտադիր կատարման ենթակա պահանջներ

1. Արևակայանի, ենթակայանի, էլեկտրահաղորդման գծերի անվտանգության գոտիների ապահովումը նախատեսել Կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի N523-Ն որոշման պահանջներին համաձայն: Արևակայանի պլանային վերանորոգման և վերակառուցման աշխատանքները պետք է կատարել ՏԿ-ի պահանջներին համապատասխան:
2. Վերականգնվող էներգետիկ ռեսուրսների կիրառումը իրականացնել անվտանգության առաջին և երկրորդ սանիտարական գոտիների ապահովմամբ:
3. Բացառել կայուն օրգանական աղտոտիչներով շրջակա միջավայրի աղտոտումը և տարածումը:
4. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածի և 21-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ա-Ս ՓԱՈՒԵՐ» ՍՊԸ-ի կողմից Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովինար բնակավայրի Աղյի քառ 1 հողամաս հասցեում նախատեսվող «Ծովինար 2» արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝



Շերիքնագ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Շուշանիկ Կարապետյան